

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՏՈՒՖԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020
ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ ԹԻՎ 2-Ն ԵՎ 3-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով մինչև ս/թ մարտի 1-ը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը:

Թիվ 3-Ն որոշման համարակալումը սխալ է գրանված:

Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը: Բացի այդ, որոշման եկամտային և ծախսային մասերում փոփոխությունները թերի են կատարված: